



ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕ

Տիգրան Գրիգորյանն արդեն շուրջ 5 տարի է աշխատում է որպես ծաղրածու և ձեռնածու: Հարցազրույցի ընթացքում Տիգրանն ասաց, որ իր կրկեսում հայտնվելը, կարիերայի ստեղծումը եղել է շատ պատահականորեն: Մեր հերոսը երագում է մեծ ճանաչում ունենալ, դառնալ հայտնի արտիստ և միշտ զբաղվել սիրած գործով: Տիգրան Գրիգորյանը ծնվել է 1992թ-ի մայիսի 9-ին Բյուրեղավան քաղաքում: 1999-ին ընդունվել և 2007-ի ավարտել է Բյուրեղավանի թիվ 1 դպրոցը, ստանալով 8 ամյա կրթություն: Ապագա ծաղրածուն 3 տարի սովորել է տեղի արհեստագործական ուսումնարանում և ստացել ավտոփականագործի մասնագիտություն: Պատանի Տիգրանը 14 տարեկան հասակում մայրիկի հետ այցելում է կրկես: Կրկեսը դիտելուց հետո արենայում արվում է հայտարարություն` կրկեսին կից բացվում է խմբակ-դպրոց, որտեղ երեխաներին կսովորեցնեն կրկեսի բոլոր հնարքները: Տիգրանը մեծ սիրով սկսում է հաճախել, այդ խմբակ և դառնում ՀՀ վաստակավոր արտիստ Սոս Պետրոսյանի աշակերտը: 2010-2012թթ ծառայում է հայոց բանակում: Անգամ այդ տարիներին չի կարողանում մոռանալ ծաղրածուի մասնագիտությունը: Բանակից վերադառնալով անմիջապես անցնում է իր սիրելի գործին: Ասում է` ծաղրածուների մասին մտածում էի, որ նրանք սովորական մարդիկ չեն, այլ աշխարհից են: Մի օր մտա կրկես և հասկացա, որ հենց այդպես է: Երբ հագնում ես ծաղրածուի հագուստ, ամբողջովին կերպարանափոխվում ես: Ծաղրածուն տխուր է, բայց նրա նպատակը մարդկանց ուրախացնելն ու զվարճացնելն է: Մեկ տարուց ավելի է, որ կրկեսում չեմ աշխատում: Աշխատում եմ տարբեր սրճարաններում, մասնակցում տարբեր միջոցառումներում, բայց այն հույզերը չեմ ստանում, որ ստանում էի կրկեսում ելույթ ունենալիս: Հաճախակի ուրախացնում է բյուրեղավանցի երեխաներին, նրան հրավիրում եմ դպրոցներ, նախակրթարան որտեղ կարողանում է նաև իր գիտելիքները հանձնել բյուրեղավանցի փոքրիկ հանդիսատեսի դատին: Շուտով կրկեսը կկառուցվի և կրկին կլինեն բեմում: Սա է նրա երազանքը, սրտի թռթռով սպասում է կրկեսի բացմանը:

ՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕ ՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕ,ՔՕՕ  
 ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ,ՕՕՕՕՕ ՕՕՕՕՕՕ  
 :ՕՕՕՕՕՕՕՕՕՕ ՕՕՕՕ ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ,ՕՕ ՕՕՕՕՕՕ ՕՕՕՕՕ ՕՕՕՕՕ :

□□□□ □□□□□□□□□□

12.02.13